

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2013թ. մայիսի 21-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 29-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### Օրակարգ.

1. Սահմանադրական իրավունքի, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի, Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնների վարիչների ընտրություններ:

2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2012-2013 ուս. տարվա շրջանավարտներին ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:

3. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՄԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի, Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնների վարիչների տեղի համար հայտարարված մրցույթի մասին հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ս. Դիլբանդյանը հայտնեց, որ

ա/ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Նորիկ Այվազյանը,

բ/ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Սամվել Դիլբանդյանը,

գ/ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչի տեղի համար դիմել է նույն ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Արթուր Վաղարշյանը:

Ելույթ ունեցողը ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալների հետ, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդների թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնների դրական կարծիքները և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթ ունեցան նաև ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Ղազինյանը, սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ Ռ. Եղյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի վերը նշված պաշտոնների համար Նորիկ Այվազյանի, Սամվել Դիլբանդյանի, Արթուր Վաղարշյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով. Նախագահ՝ Ա. Գաբուզյան, անդամներ՝ Հ. Խաչիկյան և Ս. Հովսեփյան (ՈւԳԸ նախագահ):

**ԼՄԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել դրա 32 անդամներից 29-ը, որոնք բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

ա/ Նորիկ Այվազյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 25 անդամ, դեմ՝ 3, մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր,

բ/ Սամվել Դիլբանդյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 27 անդամ, դեմ՝ 1, մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

գ/ Արթուր Վաղարշյանին կողմ են քվեարկել գիտական խորհրդի 27 անդամ, դեմ՝ 1, մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ քվեարկության արդյունքները,

2. ա/ Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Նորիկ Այվազյանին համարել ընտրված սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

բ/ Իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Սամվել Դիլբանդյանին համարել ընտրված Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում,

գ/ Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Արթուր Վաղարշյանին համարել ընտրված Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում:

**2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2012-2013 ուս. տարվա շրջանավարտներին ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի ցիտական քարտուղարը հայտնեց, որ ԵՊՀ 2013-2014 ուսումնական տարվա ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորություն տալու խնդրանքով գիտական խորհրդին են դիմել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2012-2013 ուս. տարվա հետևյալ շրջանավարտները.

1. Ռաֆիկ Գրիգորյան,

2. Պարզև Սարոյան,

3. Արգար Քյան,

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Իսկոյանը:

**ՈՐՈՇԵՑԻՑԻՆ.** Հաշվի առնելով վերոհիշյալ մագիստրոսների բարձր առաջադիմությունը և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

**3.1. ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս Անահիտ Մանասյանի «Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Գ. Հարությունյանը, Ս.Մեղրյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի քարտուղար

Տ. Ղավթյան